

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» (ՔՀԻ) հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1998թ.՝ նպատակ ունենալով աջակցել Հայաստանում ազատ, ժողովրդավարական հասարակության կայացման գործընթացին: Կազմակերպության գործունեությունն ուղղված է մարդու իրավունքների ոլորտում կարողությունների զարգացմանը և իրազեկմանը:

Մարդու իրավունքների ոլորտի գործունեության հիմնական ուղղություններն են խոշտանգումների կանխարգելումը, արդարադատության համակարգի բարեփոխումները, այդ թվում՝ պատիժների կատարման հիմնախնդիրները և այլընտրանքային պատժամիջոցների խթանումը, աջակցությունը պրոբացիայի ծառայության ստեղծմանը և զարգացմանը, անչափահասների արդարադատությունը, մարդու իրավունքների ոլորտում օրենսդրության բարելավումը՝ ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների համապատասխանեցման նպատակով և այլն: Իր առջև դրած նպատակները ՔՀԻ-ն իրականացնում է հետևյալ եղանակներով.

- **Պրոբացիա.** ՔՀԻ-ն եղել է Հայաստանում Պրոբացիայի ստեղծման հետևողական ջատագովներից մեկը: Ծառայության ստեղծումից ի վեր իրականացվել են տարբեր ծրագրեր և գործողություններ՝ ուղղված Պրոբացիայի ծառայության կայացմանը և զարգացմանը: Ծրագրերն իրենց մեջ ներառել են աշխատանքներ և՛ Պրոբացիայի ծառայողների, և՛ շահառուների հետ: ՔՀԻ-ն մշակել է (նաև թվային տարբերակով) Ռիսկերի և կարիքների գնահատման գործիք, որը տրամադրվել է Պրոբացիայի ծառայությանը: ՔՀԻ նախաձեռնությամբ գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ ստեղծվել է «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանց, որի կառավարման խորհրդի նախագահն է ՔՀԻ տնօրեն Արտակ Կիրակոսյանը:

- **Ազատությունից զրկված անձանց վերաինտեգրում.** մշակվել են ուսումնական մոդուլներ և կին դատապարտյալների համար ներդրվել և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացվել են կրթական, մասնագիտական և առողջ ապրելակերպին ուղղված դասընթացներ հետևյալ ոլորտներում՝ համակարգչային բազային գիտելիքներ, անգլերեն, հելոնազգործություն և կարպետագործություն, վարսահարդարում, խոհարարություն, բիզնես պլանավորում և կարիերա, ֆիթնես և յոգա: Դասընթացների կազմակերպման նպատակով մասնակի վերանորոգվել և համապատասխան սարքավորումներով կահավորվել են դասասենյակներ, մարզադահլիճ և խոհանոց: Աշխատանքներ են իրականացվել նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ (ՄՀԻԱ) իրականացնող ստորաբաժանման աշխատակազմի համար: Մշակվել են Գործողությունների ստանդարտ ընթացակարգեր, տեղեկատվական ուղեցույցեր, ինչպես նաև մի շարք գործիքներ, որոնց միջոցով հնարավոր է կատարել շահառուի սոցիալ-հոգեբանական կարիքների և ռիսկերի գնահատում:

- Սոնիթորինգ.** ՔՀԻ-ն պարբերաբար իրականացնում է քրեական և վարչական գործերով դատական մոնիթորինգ տարբեր թեմաներով, որոնց արդյունքները, համադրվելով օրենսդրական վերլուծության հետ, հրապարակվել են զեկույցների և ուսումնասիրությունների տեսքով: Այժմ իրականացվում է Պրոբացիայի շահառուների և պայմանական վաղաժամկետ ազատման գործերով ուսումնասիրություն:

Ստեղծման պահից ի վեր կազմակերպությունը հանդիսացել է քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող Դիտորդական խմբի անդամ, եղել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կից Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմում, իսկ 2007թ. կազմակերպությունը մասնագիտացել է նաև ընտրությունների մոնիթորինգի և ընտրական իրավունքի պաշտպանության ոլորտում:
- Օրենսդրության վերլուծություն և փոփոխության առաջարկների մշակում և լոբբինգ**՝ մարդու իրավունքների ոլորտը կարգավորող օրենքների արդյունավետ կիրառման, դրանց բարեփոխման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման նպատակով:
- Չեկույցներ, ուսումնասիրություններ և այլ հրատարակություններ.** Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ զեկույցների և հայտարարությունների տարածում՝ ուղղված ներպետական և միջազգային ատյաններին՝ նպատակ ունենալով վեր հանել համակարգային խնդիրները և լուծման առաջարկներ ներկայացնել, ինչպես նաև՝ նպաստել անպատժելիության մթնոլորտի վերացմանն ու կանխել հետագա խախտումները:

ՔՀԻ-ն Հայաստանի համընդհանուր պարբերական այլընտրանքային զեկույցներ է ներկայացրել ՄԱԿ-ին ինչպես անհատական, այնպես էլ՝ միջազգային այլ կազմակերպությունների հետ համատեղ (Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա, Նորվեգիայի հելսինկյան կոմիտե և այլն):
- Հասարակության իրազեկվածության բարձրացում և շահերի պաշտպանություն**՝ մարդու իրավունքների, այդ թվում՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների վերաբերյալ ուղեցույցների, տեղեկագրքերի, բջջային հավելվածի և այլ նյութերի պատրաստման և տարածման միջոցով:
- Կարողությունների զարգացում և վերապատրաստում.** ՔՀԻ-ն պարբերաբար կազմակերպում է կարողությունների զարգացման և վերապատրաստման դասընթացներ տարբեր թեմաներով և տարբեր շահառու խմբերի համար: Մարդու իրավունքների տարբեր ոլորտների և խաղաղաշինության ու կոնֆլիկտների հաղթահարման դասընթացներ են կազմակերպվել աշակերտների, ուսանողների և երիտասարդների համար: Վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել փաստաբանների, դատախազների, պրոբացիայի ծառայողների, ոստիկանների և քրեակատարողական ծառայողների համար: Կարողությունների զարգացման և վերապատրաստման որոշ ծրագրեր կազմակերպվել են տարածաշրջանային մակարդակով: ՔՀԻ-ն իրականացրել է նաև պրոբացիայի ծառայության վերաբերյալ փորձի փոխանակման ծրագիր արտերկրում ՀՀ պետական տարբեր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ: